ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Տերյան փող., 44, հեռ.՝ (+374 11) 518 401,
էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«04» 06 2020թ.

№ 533-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի և ապասարկումների բաժնի առաջատար մասնագետ Իշխան Փոթիկյանի կողմից 12.12.2019թ. կազմված թիվ 033187 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի վարչական իրավախախտման վերաբերյալ գործեր քննելու վարչական տույժ նշանակելու համար նյութեր նախապատրաստող հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/, 04.06.2020թ. տեղի ունեցած նիստի ընթացքում քննեց 12.12.2019թ. կազմված թիվ 033187 արձանագրության մեջ նշված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, որի համաձայն՝ քաղաքացի Ռոլանդ Աբրահամյանի կողմից 21.11.2019 թվականին Երևան քաղաքի Հանրապետության Հրապարակում իրականացվել է ոչ սահմանված վայրում առևտուր:

Գործի քննության ընթացքում Հանձնաժողովը, էական փաստական և իրավաբանական հանգամանքների հետազոտման արդյունքում պարզեց, որ քաղաքացի Ռոլանդ Աբրահամյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 162-րդ հոդվածի 2-րդ մասով /ոչ սահմանված վայրում առևտուր անելը/ նախատեսված վարչական իրավախախտումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները և գործի քննության ընթացքում պարզված հանգամանքները, ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով, 162-րդ հոդվածի 2-րդ մասով, 219.1-րդ և 281-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 07.05.2010թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» թիվ 96-Ն որոշմամբ, «Կարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի Ռոլանդ Աբրահամյանին Օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Առաջարկել քաղաքացի Ռոլանդ Աբրահամյանին միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ և Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ վճարում կատարելով կենտրոնական գանձանպետարանի 900015213110 հաշվեհամարին: Օրենքով սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում այն կարող է բռնագանձվել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

3. Կայացված որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով կուղարկվի քաղաքացի Ռոլանդ Աբրահամյանին:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով /ՀՀ վարչական դատարան/ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ